ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2022 թվականի N 270-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1115-Ն որոշման N 3 հավելվածը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների իրականացման նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով.

1) ***Միհրան Սահակյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Մարինե Սրբեփանյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության պետ *(համաձայնությամբ)*,

3) ***Արթուր Ջոհրաբյան*** - հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ *(համաձայնությամբ)*,

4) Համայնքների ղեկավարներ - հանձնաժողովի անդամ *(համաձայնությամբ)*,

5) ***Հրաչյա Վարդանյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ,

6) ***Կարեն Հունանյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

7) ***Հարություն Ալեքսանյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,

8) ***Մարի Բալյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության խորհրդական,

9) ***Վարդան Մկրտչյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի «Աբովյան» սպասարկման գրասենյակի պետ *(համաձայնությամբ)*,

10) ***Սամվել Մելոյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի «Հրազդան» սպասարկման գրասենյակի պետի պաշտոնակատար *(համաձայնությամբ)*,

11) ***Մեդրակ Սահակյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի «Եղվարդ» սպասարկման գրասենյակի պետ *(համաձայնությամբ)*,

12) ***Բագրատ Հարեյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի «Չարենցավան» սպասարկման գրասենյակի պետ *(համաձայնությամբ)*,

13) ***Հասմիկ Հակոբյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ:

2. Հանձնաժողովին՝ համակողմանիորեն աջակցել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների իրականացման գործընթացում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի օգոստոսի 17
ք. Հրազդան